ԳՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

ՀԵՐՈՍ ԱՐՑԱԽՑՈՒՆ

Արցախցու համար սիրտս է արյունում,
Ամեն օր քանի՞ վիրավոր, զոհեր,
Մեր անմահների թիվն է բազմանում,
Արցախցու համար աղոթք եմ անում:

Անհաս երկնքից հրաշք եմ հայցում,
Անցյալի պայծառ մի հրաշք անճառ,
Դավթյան պարսատիկ, Նպատյան աղոթք,
Հրաշք փառավոր, նվեր երկնավոր:

Ծառերի հույսն է կանթեղում հատնում,
Իմ հույսի լապտերն է դեռ առկայծում,
Պիտի մենք հասնենք անպայման եզրին
Մեր ազատության այս վեհ պայքարում:

Որդյա՛կ, քեզ համար աղոթում եմ ես,
Հանկարծ չխփվես, իզուր չսպանվես,
Այլ արիանաս Դավիթ Բեկի պես,
Սուրբ հաղթանակո՛վ սուրդ պատյանես:

4.01.1992